ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

# ՀՐԱՄԱՆԸ

«09» նոյեմբերի 2018 թվականի № 140-Ա

## ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2014 թվականի հունիսի 25-ի թիվ 81-Ա հրամանը և «ՄՈԼԻԲԴԵՆԻ ԱՇԽԱՐՀ» ՍՊ ընկերության թույլ տրված խախտումների հիմքով ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ընդերքի գործակալության պետի պաշտոնակատարի 2018 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 05/11114-18 միջնորդագիրը.

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հարուցել վարչական վարույթ «ՄՈԼԻԲԴԵՆԻ ԱՇԽԱՐՀ» ՍՊ ընկերության թույլ տված խախտման հիմքով:
2. Վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովին՝

1) վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի անդամներին և վարույթի մասնակիցներին ծանուցել վարչական վարույթի հարուցման, անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին.

2) վարչական վարույթի արդյունքում Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին ներկայացնել համապատասխան վարչական ակտ ընդունելու վերաբերյալ հիմնավոր առաջարկություն՝ ներկայացնելով նաև վարչական ակտի նախագիծը:

3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

**ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ**

11/9/2018

X

VERIFIED OCSP 09-Nov-18 15:05:21 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118